նեին այցելելու ծննդկանին՝ նորածին երեխային չը կոխելու համար, ինչպես ծննդկանն էլ ինքը չպետք էր այցելեր նորապսակներին, նրանց չը կոխելու, զավակներ ունենալու ընդունակությունից չզրկելու համար[54]: Նորահարսը քառասուն օր չպիտի ման լվանար, խմոր հունցեր, ձեռքը կերակրի ամանի մեջ գցեր՝ չպղծելու, չհարամացնելու համար:

Այսպիսով առագաստ մտնողները կարծես մի մեղք էին գործած լինում, պղծված էին լինում չար ոգիների ազդեցությամբ: Պղծված էր և հանցագործ դարձած նաև այն որսորդը, որը որսի գնալու գիշերը սեռական հարաբերություն էր ունեցել: Այս դեպքերում սեռական հարաբերությունը նկատվում էր որպես հանցագործություն, մեղք, չար ոգու դրդմամբ կատարած գործողություն, ինչպես և որդեծնությունը, երբ ծննդկանից նույնպես պահանջվում էր քառասունքապահություն: Այս մտայնության հետ անշուշտ պետք է զուգորդվեր հրեական այն ավանդությունը, որ Եվային գայթակղեցնողը սատանան էր, որը առաջարկել էր արգելված ծառի խնձորն[55] ուտել: Այս ավանդության մեջ էլ ամուսնական սեռական մերձեցումը ճանաչվում էր հանցանք, մեղք, ուստի և ծննդաբերությունը:

Այն դեպքերում, երբ որևէ պատճառով եկեղեցական կամ նույնիսկ թորէնի մոտ կատարվող պսակը արգելքների էր հանդիպում՝ մեծ մասամբ շահության պատճառով, երբ քահանան հրաժարվում էր նաև թորէնի պսակ կատարելուց, զանգեզուրցին հեշտությամբ դիմում էր ապօրինի կնապահությանը, որից ծնված զավակները ըստ տեղական սովորության հասարակության աչքում այնուամենայնիվ վայելում էին ժառանգության բոլոր իրավունքները:

Վերջին տարիները, մինչև սովետական կարգերի հաստատվելը, երբ հաճախակի էր դարձել ամուսնու տանից երկարատև բացակայությունը, կողմնակի արդյունքով ընտանիքը պահելու անհրաժեշտության հետևանքով, ավելի հաճախացել էին և կնոջ կողմից դավաճանության դեպքերը: Վերադարձած ամուսինը կանգ չէր առնում կնոջը դաշույնով սպանելու կամ խեղդելու առաջ: Պատահել են և այնպիսի դեպքեր, երբ մայրը ինքն էր հովանավորել իր աղջկա դավաճանությունը փեսայի երկարատև բացակայության ժամանակ:

Ամուսնուն անհավատարիմ կնոջը հասարակության որոշմամբ ենթարկում էին հրապարակական խայտառակման: Նրա մազը խուզում էին, երեսին մուր քսում, նստեցնում էին էշի վրա դեմքը դեպի պոչը դարձած, բռնել էին տալիս պոչը սանձի փոխարեն և զուռնա-ղավալավ շրջեցնում գյուղի փողոցներով[56]: Այսպես վարվում էին նաև անառակության մեջ բռնված տղամարդ ամուսնու հետ:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ՄԱՆԿԱՏԱՑՈՒԹՅՈՒՆ[57]

Դաշտանի օրերին կինը, թե՛ աղջիկ եղած ժամանակ և թե՛ ամուսնանալուց հետո, անսուրբ և պղծված էր համարվում: Նրան թույլ չէր տրվում այդ միջոցին խնոցի հարել, խմոր հունցել, հաց թխել և հաղորդություն առնել:

---

54 Վաշագա՛ն:

55 Հմմտ. խնձորի դերը հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ:

56 СМОМПК, вып. XXXIV, отд. III, էջ 205:

57 Մանրամասն նկարագրությունը տե՛ս Ալայեան Ե., Սիսիան, 128—132, Զանգեզուր, էջ 85—91 և մասամբ Гедеванов М. А., Зангезурский уезд в медицинском отношении, «Медицин. с б-к», № 55, էջ 132—136.